Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԿԾ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 14. Կոտայքի մարզ - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024 - 31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04 - 30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
15:35:30 AMST

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, թեյ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 75 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 3 դեպքի վարում՝ օժանդակ միջոցների ստացում, անվճար բուժօգնության ստացման կազմակերպում, եռամսյակային օգնության կազմակերպում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 44 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 5 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 8 շահառու ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներին,
  - Ճաշարանի 32 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝ «Սուրբ Զատիկ» 2 անգամ, «Մայրության և գեղեցկության տոն», «Բարության օր», «Ընթերցանության օր», Հրազդանի Ջրառատի միջնակարգ դպրոցի աշակերտների կողմից բեմականացված «Քաջ Նազար» հեքիաթի դիտում, «Եղեռնի զոհերի հիշատակի օր» 2 անգամ, «Ծնունդների նշում» 2 անգամ, «Աշխատավորի օր», «Հաղթանակի օր» 2 անգամ, Ընտանիքի օր, Հանրապետության տոն, Երեխաների պաշտպանության միջազգային օր:
  - 8 շահառու ( շարունակական) օգտվել է լվացքի տրամադրման ծառայությունից:
  - 3 շահառու օգտվել է վարսավիրական ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- ✓ Միջոցառումներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/crtuX, https://shorturl.at/nvy89, https://shorturl.at/nAjKC, https://shorturl.at/ajuJP, https://shorturl.at/hBtLy , https://shorturl.at/yv0oo, https://goo.su/Xz2kd, https://clck.ru/3BXC3m)։
- ✓ Խմբակներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/bjlOZ, https://shorturl.at/CFk06 , https://shorturl.at/Ers50 , https://shorturl.at/elXtA, https://shorturl.at/s1tO7, https://goo.su/BMmTARJ, https://shorturl.at/dNDHK, https://shorturl.at/tuVY6) ։
- ✓ Այլ տեսանյութեր՝ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://goo.su/TqT9Jno, https://clck.ru/3BXBdz, https://shorturl.at/7MXq6 )։

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- ➢ սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- ➢ սոցիալական խորհրդատվություն,
- ➢ այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով՝

- սոցիալական ծառայության պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և բարդ դեպքերի ուսումնասիրություններ,
- ցերեկային կենտրոնի պատասխանատուն եւ սոցիալական աշխատողը մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կողմից կազմակերպված «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը» թեմայով դասընթացին,
- կենտրոնի պատասխանատուն մասնակցություն է ցուցաբերել ՄՍԾ Հրազդանի ՏԿ-ին գործող համակարգող խորհրդի նիստերին,
- կենտրոնի պատասխանատուն մասնակցել է հոգաբարձուների խորհրդի նիստին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 75 / 75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 50 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 29 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 14 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 5 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 24 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 46 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | 0 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 75 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների կազմակերպում<br>Լվացքի և վարսավիրական ծառ. | 43<br>10 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «08» 07.2024թ

(ստորագրություն, անուն, ազգանուն)